

# 110-րդ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի 106 բանաձև

Հոկտեմբեր 10, 2007

*Կոչ անելով նախագահին հավաստելու, որ Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականությունն արտացոլում է համապատասխան ըմբռնում և զգայունություն այն հարցերի շուրջ, որոնք առնչվում են մարդու իրավունքներին, էթնիկ զտումներին և ցեղասպանությանը, որը փաստագրված է Միացյալ Նահանգների արձանագրություններում և վերաբերում է Հայոց ցեղասպանությանը և այլ նպատակներին.*

## **Մաս 1 ՀԱՄԱՌՈՏ ՎԵՐՆԱԳԻՐ**

Այս բանաձևը կարող է մեջբերվել որպես «Միացյալ Նահանգների արձանագրությունների հաստատումը Հայոց ցեղասպանության բանաձևի վերաբերյալ»:

## **Մաս 2 ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ**

Ներկայացուցիչների պալատը եզրակացնում է հետևյալը՝

1. Հայոց ցեղասպանությունը ծրագրվել և իրականացվել է Օսմանյան կայսրությունում 1915-1923թթ՝ պատճառ հանդիսանալով մոտ 2000000 հայերի բռնի տեղահանմանը, որոնցից 1500000 այր, կին և երեխա սպանվեցին, իսկ 500000 փրկված հայեր արտաքսվեցին իրենց տներից, որի արդյունքում ոչնչացվեց հայերի 2500 տարվա ներկայությունն իրենց պատմական հայրենիքում:
2. 1915թ մայիսի 24-ին Դաշնակից պետությունները՝ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը միահամուռ հայտարարեցին առաջին անգամ մեղադրելով մի կառավարության, «մարդկության դեմ հանցանք» գործելու մեջ:
3. Այս միացյալ հայտարարությունը նշում էր. «Դաշնակից կառավարությունները հրապարակավ հայտարարում են Բարձր Դռանը, որ Օսմանյան կառավարության բոլոր անդամները, ինչպես նաև ջարդերն իրագործած նրանց կատարածուները պատասխանատու են այս կոտորածների համար:
4. Առաջին համաշխարհային պատերազմից հետո թուրքական կառավարությունը մատնանշեց գլխավոր ղեկավարներին, ովքեր ներգրավված են եղել հայերի դեմ ցեղասպանության «կազմակերպման և իրագործման» և «հայերի ջարդերի և կոտորածների» մեջ:
5. Մի շարք ռազմական դատարաններում երիտթուրքերի ռեժիմի պաշտոնյաները դատապարտվեցին և մեղավոր ճանաչվեցին հայ ժողովրդի նկատմամբ ջարդեր կազմակերպելու և իրականացնելու համար:
6. Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչները՝ ռազմական նախարար Էնվերը, ներքին գործերի նախարար Թալեաթը և ռազմածովային նախարար Ջեմալը իրենց գործած ոճիրների համար մահվան դատապարտվեցին, սակայն դատարանի դատավճիռը չիրագործվեց:
7. Հայոց ցեղասպանությունը և տեղի արդարադատության ձախողումները փաստագրված են ապացույցներով Ավստրիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի, Միացյալ Նահանգների, Վատիկանի և շատ այլ երկրների ազգային արխիվներում և այդ մեծ

քանակությամբ ապացույցները վկայում են միևնույն փաստերը, միևնույն դեպքերը, միևնույն հետևանքները:

**8.** Միացյալ Նահանգների պետական արխիվը և Արձանագրությունների վարչությունը հայոց ցեղասպանության վերաբերյալ պարունակում են հիմնավոր փաստաթղթեր: Հատկանշական է Միացյալ նահանգների Պետական Դեպարտամենտի 59-րդ արձանագրությունների խումբը, որը ներառում է 867.00 և 867.40 թղթապանակները, որոնք բաց և հասանելի են լայն հանրությանը և շահագրգիռ հաստատություններին:

**9.** Հարգարժան Հենրի Մորգենթաուն, 1913-1916թթ. Միացյալ Նահանգների դեսպանը Օսմանյան կայսրությունում, Հայոց ցեղասպանության դեմ բողոքի ելույթներ է ունեցել այլ երկրների, այդ թվում Օսմանյան կայսրության դաշնակից երկրների պաշտոնյաների հետ միասին:

**10.** Դեսպան Մորգենթաուն պարզորոշ նկարագրում է Միացյալ Նահանգների Պետական Դեպարտամենտին Օսմանյան կայսրության կառավարության քաղաքականությունը՝ որպես «ցեղի ոչնչացման արշավ»: Միացյալ Նահանգների պետքարտուղար Ռոբերտ Լենսինգը 1915թ հուլիսի 16-ին կարգադրել է, որ «Դեպարտամենտը հավանություն է տալիս Ձեր գործելակերպին՝ դադարեցնելու հայերի հալածանքները»:

**11.** Սենատը 1916թ փետրվարի 9-ի համանման 12-րդ բանաձևում հաստատեց, որ «Միացյալ Նահանգների նախագահին հարգանքով խնդրվում է հատուկ օր սահմանել, որ այդ երկրի քաղաքացիները իրենց կարեկցանքն արտահայտեն հայերին օգնելու նպատակով ստեղծված ֆոնդերում նվիրատվություններ կատարելով», որոնք այդ ժամանակ մահանում էին «սովից, հիվանդություններից ու անասելի տառապանքներից»:

**12.** Նախագահ Վուդրոու Վիլսոնը Կոնգրեսի որոշումով արտոնված աջակցում և խրախուսում է «Մերձավոր Արևելքի օգնության ֆոնդ», կազմակերպության ստեղծումը. որը 11600000 դոլար է տրամադրել 1915-1930թթ որպես օգնություն՝ հայոց ցեղասպանության փրկվածներին, ներառյալ 132000 որբերին, որոնք ամերիկացի ժողովրդի հոգեզավակները դարձան:

**13.** 1920թ մայիսի 11-ին ընդունված Սենատի 359-րդ բանաձևը, մասամբ նշում է, «որպես ապացույց բերվում են այն լուսմները, որոնք դեկավարել է Սենատի Արտաքին հարաբերությունների կոմիտեի ենթահանձնաժողովը: Այն հստակորեն նշում է ջարդերի և այլ դաժանությունների վերաբերյալ զեկույցների ճշմարտությունը, որոնց պատճառով հայ ժողովուրդը տառապել է:

**14.** 1920թ ապրիլի 13-ի բանաձևին հետևում է Սենատին գեներալ Ջեյմս Հարբորդի ղեկավարությամբ դեպի Հայաստան կատարված ամերիկյան ռազմական առաքելության զեկույցը, որտեղ նշվում է «կտտանքները, բռնությունները, տանջանքները և մահը անջնջելի հետք են թողել հայկական բազում գեղեցիկ հովիտներում, իսկ այդ շրջանով անցնող ճանապարհորդները շատ քիչ դեպքերում ականատես չեն լինի բոլոր ժամանակների վիթխարի հանցանքի փաստերին»:

**15.** Ինչպես Միացյալ Նահանգների Հոլոքոստի թանգարանում է ցուցադրվում, Ադոլֆ Հիտլերը, կարգադրելով իր զորահրամանատարներին 1939թ հարձակվել Լեհաստանի վրա, առանց սադրանքների, ընդդիմանալով եղած առարկություններին, ասել է. «Ո՞վ է ի վերջո խոսում հայերի բնաջնջման մասին», այսպիսով ճանապարհ հարթելով Հոլոքոստն իրականացնելու համար:

- 16.** Ռաֆայել Լեմկինը, ով ձևակերպեց «ցեղասպանություն» տերմինը 1944թ, և ով Միացյալ ազգերի կոնվենցիայի ցեղասպանության կանխարգելման և պատժի կողմնակիցն էր, հայկական դեպքը անվանել է 20-րդ դարի ցեղասպանության ցայտուն օրինակ:
- 17.** Լեմկինի պնդմամբ Միացյալ ազգերի ցեղասպանության վերաբերյալ առաջին բանաձևն ընդունվել է 1946թ դեկտեմբերի 11-ին, ըստ որի Միացյալ ազգերի Գլխավոր ասամբլեայի 96-1 բանաձևը և ցեղասպանության կանխարգելման ու պատժի վերաբերյալ Միացյալ ազգերի կոնվենցիան ճանաչում են հայոց ցեղասպանությունը՝ որպես մի գործողություն, որը Միացյալ ազգերը նպատակադրված են կանխարգելել և պատժել՝ գոյություն ունեցող օրենսդրական չափանիշներով:
- 18.** 1948թ Միացյալ ազգերի պատերազմական հանցանքների հանձնաժողովը հայոց ցեղասպանությունը անվանեց «գործողությունների տեսակ, որը համապատասխանում է ժամանակակից տերմինով «մարդկության դեմ հանցագործությունների» բնորոշմանը, հանդիսանալով Նյուրմբերգյան դատավարությունների նախադեպը:
- 19.** Հանձնաժողովը նշում է, «1915թ Դաշնակիցների փաստաթղթի համաձայն Սևրի դաշնագրի 230 հոդվածի դրույթները ակնհայտորեն ընդգրկում են այն հանցանքները, որոնք իրագործվել են ծագումով հայ կամ հույն թուրքական քաղաքացիություն ունեցող անհատների դեմ թուրքական տարածքում: Ուստի այս հոդվածը փոխարինում է Նյուրմբերգյան և Տոկիոյի կանոնադրությունների 5-րդ և 6-րդ հոդվածներին՝ որպես նախորդ, և կատեգորիաներից մեկով օրինակ է հանդիսանում՝ որպես «մարդկության դեմ հանցանք»:
- 20.** 1975թ. ապրիլի 8-ին ընդունված Պալատի 148-րդ միասնական բանաձևը հաստատում է, «1915թ ապրիլի 24-ը այսուհետ նշվում է որպես «մարդու հանդեպ մարդու դաժան վերաբերմունքի հիշատակման ազգային օր», իսկ Միացյալ Նահանգների նախագահը հաստատում և պահանջում է կազմել հռչակագիր՝ կոչ անելով Միացյալ Նահանգների ժողովրդին համարել այդ օրը ցեղասպանության, հատկապես հայ ժողովրդի ցեղասպանության բոլոր զոհերի հիշատակման օր»:
- 21.** Նախագահ Ռոնալդ Ռեգանը 1981թ ապրիլի 22-ի 4838 հռչակագրում մասամբ նշում է, «Հոլոքոստի դասերը չպետք է մոռացվեն, ինչպես շատ այլ ժողովուրդների բազում հալածանքները, որոնց նախորդել է հայերի ցեղասպանությունը և հաջորդել է կամբոջացիների ցեղասպանությունը»:
- 22.** 1984թ սեպտեմբերի 10-ին ընդունված Պալատի 247 միացյալ բանաձևը հաստատում է, «1985թ ապրիլի 24-ը այսուհետ նշվում է «Մարդու հանդեպ մարդու դաժան վերաբերմունքի» հիշատակման ազգային օր, և Միացյալ Նահանգների նախագահին վերապահվում է և առաջարկվում հաստատել հռչակագիր, որը կոչ կանի Միացյալ Նահանգների ժողովրդին համարել այդ օրը, որպես ցեղասպանության զոհերի, հատկապես մեկ ու կես միլիոն հայերի հիշատակման օր... »:
- 23.** 1985թ. օգոստոսին համակողմանի և ուշադիր ուսումնասիրությունից հետո Միացյալ Նահանգների Փոքրամասնությունների պաշտպանության և խտրականության կանխարգելման հարցերով ենթահանձնաժողովը 14 կողմ և 1 դեմ ձայնով քվեարկեց «Ցեղասպանության ոճիրի կանխարգելման և պատժի հարցերով ուսումնասիրությունը» զեկույցի օգտին, որում նշվում է. «Նացիստական հանցագործությունները 20-րդ դարի ցեղասպանության միակ դեպքը չեն: Ի թիվս այլոց նման որակում ունեցող օրինակներից է Օսմանյան հայերի ջարդերը 1915-1916թթ.»:

**24.** Այդ գեկույցը բացատրում է նաև, որ, «անկախ [երկրների] պաշտոնյաները և ականատեսները առնվազն 1000000, և հնարավոր է հայ բնակչության կեսից ավելին ստույգորեն հաշվվում են սպանված կամ մահվան գաղթի դատապարտված: Մա հիմնավորված է Միացյալ Նահանգների, Գերմանիայի և Մեծ Բրիտանիայի, ինչպես նաև Օսմանյան կայսրության ժամանակակից դիվանագետների, ներառյալ դաշնակից Գերմանիայի արխիվներում գտնվող գեկույցներում»:

**25.** Միացյալ նահանգների Հոլոքոստի հիշատակման խորհուրդը, որը անկախ դաշնային գործակալություն է, 1981թ ապրիլի 30-ին միահամուռ կերպով հաստատում է, որ Միացյալ Նահանգների Հոլոքոստի թանգարանը ներառելու է նաև Հայոց ցեղասպանությունը և այդպես էլ արվեց:

**26.** Միացյալ Նահանգների Պետդեպարտամենտի հաստատած 1982թ խոտորված արտահայտության վերանայումը (ավելի ուշ չեղյալ հայտարարվեց), հաստատում էր, որ հայոց ցեղասպանության վերաբերյալ փաստերը կասկած են հարուցում: 1993 թ Միացյալ Նահանգների Կոլումբիայի շրջանի Բողոքների դատարանը Միացյալ Նահանգների քաղաքականության արձանագրությանը պատկանող փաստաթղթերի վերանայումից հետո նշեց, որ հայոց ցեղասպանության կասկած հարուցող արձանագրությունը «հակազդում է Միացյալ Նահանգների վաղեմի քաղաքականությանը և ի վերջո չեղյալ հայտարարվեց:

**27.** 1996թ հունիսի 5-ին Ներկայացուցիչների պալատը լրացում մտցրեց Պալատի 3540 օրինագծում՝ (արտաքին գործողություններ, արտահանման ֆինանսավորում, գումարհատկացման առընթեր ծրագրերի ակտ, 1997), որպեսզի նվազեցնի Թուրքիային հատկացվելիք 3000000 դոլարի օգնությունը, (այն Միացյալ նահանգների լոբբիստական ծախսերի նախահաշիվն էր), մինչև թուրքական կառավարությունը ճանաչի հայոց ցեղասպանությունը և քայլեր ձեռնարկի հարգելու զոհերի հիշատակը:

**28.** Նախագահ Վիլյամ Ջեֆերսոն Բլինթընը 1998թ ապրիլի 24-ին նշեց, «Այս տարի, ինչպես անցյալում, մենք միանում ենք ամերիկահայերին՝ հիշատակելու համար այս դարի պատմության ամենատխուր իրադարձությունը, Օսմանյան կայսրությունում մեկ ու կես միլիոն հայերի բռնի տեղահանություններն ու ջարդերը 1915-1923թթ. ընթացքում»:

**29.** Նախագահ Ջորջ Բուշը 2004թ ապրիլի 24-ին նշեց, «Այս օրը մենք հիշում ենք 20-րդ դարի ամենասարսափելի ողբերգություններից մեկը՝ ավելի քան 1500000 հայերի բնաջնջումը Օսմանյան կայսրությունում՝ բռնագաղթի և սպանությունների միջոցով»:

**30.** Չնայած հայոց ցեղասպանության ճանաչմանն ու հաստատմանը, տեղական և օտարերկրյա իշխանությունների անկարողությունը պատժելու հայոց ցեղասպանության պատասխանատուներին, պատճառ հանդիսացավ համանման ցեղասպանությունների իրագործման, նաև ապագայում դրանց կրկնման համար, հետևաբար նման արդար բանաձևը կօգնի կանխարգելել ապագա ցեղասպանությունները:

### **Մաս 3 ՀՈՉԱԿԱԳՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ներկայացուցիչների պալատը

1. Կոչ է անում նախագահին հավաստելու, որ Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականությունը արտացոլի համապատասխան ըմբռնում և զգայունություն այն հարցերի շուրջ, որոնք առնչվում են մարդու իրավունքներին, էթնիկ զտումներին և ապացուցված ցեղասպանություններին, որոնց թվում է հայոց ցեղասպանությունը, գիտակցի այս արդար բանաձևի ձախողման հետևանքները և,

2. Կոչ է անում նախագահին իր ապրիլի 24-ի նախագահական ամենամյա ուղերձում հիշատակել հայոց ցեղասպանությունը՝ ճշգրտորեն բնութագրելով 1500000 հայերի սիստեմատիկ և կանխամտածված բնաջնջումը՝ որպես ցեղասպանություն՝ վերականգնելով Միացյալ Նահանգների միջամտության պատվաբեր պատմությունն ընդդեմ Հայոց ցեղասպանության:

## 110TH CONGRESS

### 1ST SESSION

### H. RES. 106

### IN THE HOUSE OF REPRESENTATIVES

January 30, 2007

Mr. Schiff (for himself, Mr. Radanovich, Mr. Pallone, Mr. Knollenberg, Mr. Sherman, and Mr. McCotter) submitted the following resolution; which was referred to the Committee on Foreign Affairs

#### RESOLUTION

Calling upon the President to ensure that the foreign policy of the United States reflects appropriate understanding and sensitivity concerning issues related to human rights, ethnic cleansing, and genocide documented in the United States record relating to the Armenian Genocide, and for other purposes.

1.

#### Short Title

This resolution may be cited as the Affirmation of the United States Record on the Armenian Genocide Resolution.

2.

#### Findings

The House of Representatives finds the following:

(1)

The Armenian Genocide was conceived and carried out by the Ottoman Empire from 1915 to 1923, resulting in the deportation of nearly 2,000,000 Armenians, of whom 1,500,000 men, women, and children were killed, 500,000 survivors were expelled from their homes, and which succeeded in the elimination of the over 2,500-year presence of Armenians in their historic homeland.

(2)

On May 24, 1915, the Allied Powers, England, France, and Russia, jointly issued a statement explicitly charging for the first time ever another government of committing a crime against humanity.

(3)

This joint statement stated the Allied Governments announce publicly to the Sublime Porte that they will hold personally responsible for these crimes all members of the Ottoman Government, as well as those of their agents who are implicated in such massacres.

(4)

The post-World War I Turkish Government indicted the top leaders involved in the organization and execution of the Armenian Genocide and in the massacre and destruction of the Armenians.

(5)

In a series of courts-martial, officials of the Young Turk Regime were tried and convicted, as charged, for organizing and executing massacres against the Armenian people.

(6)

The chief organizers of the Armenian Genocide, Minister of War Enver, Minister of the Interior Talaat, and Minister of the Navy Jemal were all condemned to death for their crimes, however, the verdicts of the courts were not enforced.

(7)

The Armenian Genocide and these domestic judicial failures are documented with overwhelming evidence in the national archives of Austria, France, Germany, Great Britain, Russia, the United States, the Vatican and many other countries, and this vast body of evidence attests to the same facts, the same events, and the same consequences.

(8)

The United States National Archives and Record Administration holds extensive and thorough documentation on the Armenian Genocide, especially in its holdings under Record Group 59 of the United States Department of State, files 867.00 and 867.40, which are open and widely available to the public and interested institutions.

(9)

The Honorable Henry Morgenthau, United States Ambassador to the Ottoman Empire from 1913 to 1916, organized and led protests by officials of many countries, among them the allies of the Ottoman Empire, against the Armenian Genocide.

(10)

Ambassador Morgenthau explicitly described to the United States Department of State the policy of the Government of the Ottoman Empire as a campaign of race extermination, and was instructed on July 16, 1915, by United States Secretary of State Robert Lansing that the Department approves your procedure . . . to stop Armenian persecution.

(11)

Senate Concurrent Resolution 12 of February 9, 1916, resolved that the President of the United States be respectfully asked to designate a day on which the citizens of this country may give expression to their sympathy by contributing funds now being raised for the relief of the Armenians, who at the time were enduring starvation, disease, and untold suffering.

(12)

President Woodrow Wilson concurred and also encouraged the formation of the organization known as Near East Relief, chartered by an Act of Congress, which contributed some \$116,000,000 from 1915 to 1930 to aid Armenian Genocide survivors, including 132,000 orphans who became foster children of the American people.

(13)

Senate Resolution 359, dated May 11, 1920, stated in part, the testimony adduced at the hearings conducted by the sub-committee of the Senate Committee on Foreign Relations have clearly established the truth of the reported massacres and other atrocities from which the Armenian people have suffered.

(14)

The resolution followed the April 13, 1920, report to the Senate of the American Military Mission to Armenia led by General James Harbord, that stated [m]utilation, violation, torture, and death have left their haunting memories in a hundred beautiful Armenian valleys, and the traveler in that region is seldom free from the evidence of this most colossal crime of all the ages.

(15)

As displayed in the United States Holocaust Memorial Museum, Adolf Hitler, on ordering his military commanders to attack Poland without provocation in 1939, dismissed objections by saying[w]ho, after all, speaks today of the annihilation of the Armenians? and thus set the stage for the Holocaust.

(16)

Raphael Lemkin, who coined the term genocide in 1944, and who was the earliest proponent of the United Nations Convention on the Prevention and Punishment of Genocide, invoked the Armenian case as a definitive example of genocide in the 20th century.

(17)

The first resolution on genocide adopted by the United Nations at Lemkin's urging, the December 11, 1946, United Nations General Assembly Resolution 96(1) and the United Nations Convention on the Prevention and Punishment of Genocide itself recognized the Armenian Genocide as the type of crime the United Nations intended to prevent and punish by codifying existing standards.

(18)

In 1948, the United Nations War Crimes Commission invoked the Armenian Genocide precisely . . . one of the types of acts which the modern term crimes against humanity is intended to cover as a precedent for the Nuremberg tribunals.

(19)

The Commission stated that [t]he provisions of Article 230 of the Peace Treaty of Sevres were obviously intended to cover, in conformity with the Allied note of 1915 . . . , offenses which had been committed on Turkish territory against persons of Turkish citizenship, though of Armenian or Greek race. This article constitutes therefore a precedent for Article 6c and 5c of the Nuremberg and Tokyo Charters, and offers an example of one of the categories of crimes against humanity as understood by these enactments.

(20)

House Joint Resolution 148, adopted on April 8, 1975, resolved: [t]hat April 24, 1975, is hereby designated as National Day of Remembrance of Man's Inhumanity to Man, and the President of the United States is

authorized and requested to issue a proclamation calling upon the people of the United States to observe such day as a day of remembrance for all the victims of genocide, especially those of Armenian ancestry . . .

(21)

President Ronald Reagan in proclamation number 4838, dated April 22, 1981, stated in part like the genocide of the Armenians before it, and the genocide of the Cambodians, which followed it—and like too many other persecutions of too many other people—the lessons of the Holocaust must never be forgotten.

(22)

House Joint Resolution 247, adopted on September 10, 1984, resolved: [t]hat April 24, 1985, is hereby designated as National Day of Remembrance of Man's Inhumanity to Man, and the President of the United States is authorized and requested to issue a proclamation calling upon the people of the United States to observe such day as a day of remembrance for all the victims of genocide, especially the one and one-half million people of Armenian ancestry . . .

(23)

In August 1985, after extensive study and deliberation, the United Nations SubCommission on Prevention of Discrimination and Protection of Minorities voted 14 to 1 to accept a report entitled Study of the Question of the Prevention and Punishment of the Crime of Genocide, which stated [t]he Nazi aberration has unfortunately not been the only case of genocide in the 20th century. Among other examples which can be cited as qualifying are . . . the Ottoman massacre of Armenians in 1915–1916.

(24)

This report also explained that [a]t least 1,000,000, and possibly well over half of the Armenian population, are reliably estimated to have been killed or death marched by independent authorities and eye-witnesses. This is corroborated by reports in United States, German and British archives and of contemporary diplomats in the Ottoman Empire, including those of its ally Germany..

(25)

The United States Holocaust Memorial Council, an independent Federal agency, unanimously resolved on April 30, 1981, that the United States Holocaust Memorial Museum would include the Armenian Genocide in the Museum and has since done so.

(26)

Reviewing an aberrant 1982 expression (later retracted) by the United States Department of State asserting that the facts of the Armenian Genocide may be ambiguous, the United States Court of Appeals for the District of Columbia in 1993, after a review of documents pertaining to the policy record of the United States, noted that the assertion on ambiguity in the United States record about the Armenian Genocide contradicted longstanding United States policy and was eventually retracted.

(27)

On June 5, 1996, the House of Representatives adopted an amendment to House Bill 3540 (the Foreign Operations, Export Financing, and Related Programs Appropriations Act, 1997) to reduce aid to Turkey by \$3,000,000 (an estimate of its payment of lobbying fees in the United States) until the Turkish Government acknowledged the Armenian Genocide and took steps to honor the memory of its victims.

(28)



President William Jefferson Clinton, on April 24, 1998, stated: This year, as in the past, we join with Armenian-Americans throughout the nation in commemorating one of the saddest chapters in the history of this century, the deportations and massacres of a million and a half Armenians in the Ottoman Empire in the years 1915–1923..

(29)

President George W. Bush, on April 24, 2004, stated: On this day, we pause in remembrance of one of the most horrible tragedies of the 20th century, the annihilation of as many as 1,500,000 Armenians through forced exile and murder at the end of the Ottoman Empire..

(30)

Despite the international recognition and affirmation of the Armenian Genocide, the failure of the domestic and international authorities to punish those responsible for the Armenian Genocide is a reason why similar genocides have recurred and may recur in the future, and that a just resolution will help prevent future genocides.

**3.**

### **Declaration of Policy**

The House of Representatives—

(1)

calls upon the President to ensure that the foreign policy of the United States reflects appropriate understanding and sensitivity concerning issues related to human rights, ethnic cleansing, and genocide documented in the United States record relating to the Armenian Genocide and the consequences of the failure to realize a just resolution; and

(2)

calls upon the President in the President's annual message commemorating the Armenian Genocide issued on or about April 24, to accurately characterize the systematic and deliberate annihilation of 1,500,000 Armenians as genocide and to recall the proud history of United States intervention in opposition to the Armenian Genocide.